ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՒՅՆ ԿԵՐՊ ԷԼ ՊԻՏԻ ԳԱ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 1.9-11

9 Այս ասելուց հետո, մինչ նրանք նայում էին, Հիսուսը վեր բարձրացավ, և ամպը նրան ծածկեց նրանց աչքերից: 10 Եվ մինչ նրանք իրենց հայացքը սևեռել էին դեպի երկինք և Հիսուսի գնալուն էին նայում, ահա սպիտակ զգեստներով երկու մարդ երևացին 11 և նրանց ասացին. Ո՛վ գալիլեացիներ, ի՞նչ եք կանգնել ու երկինք նայում: Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք համբարձվեց, նույն կերպ էլ պիտի գա, ինչպես որ նրան տեսաք երկինք գնալիս:

Մատ. 24.43-44 – 43 Բայց սա իմացե՛ք, որ եթե տան տերն իմանար, թե գողը ո՞ր պահին է գալու, արթուն կմնար ու թույլ չէր տա, որ իր տուն սողոսկեր: 44 Դրա համար դո՛ւք էլ պատրաստ եղեք, որովհետև Մարդու Որդին կգա այն ժամին, երբ դուք չեք սպասի:

Ա Թես. 5.2 – որովհետև դուք ինքներդ հաստատ գիտեք, որ Տիրոջ օրը գալու է, ինչպես գողը՝ գիշերով:

- ***Ամենակարևոր հարցը, որը մենք պետք է տանք, հետևյալն է. սպասո՞ւմ ենք Քրիստոսի հայտնությանը:***

Հոգին ու հարսն ասում են. Արի՛: ...Այս բաները վկայողն ասում է. Այո՛, ես շուտով պիտի գամ: Ամե՛ն: Արի՛, Տե՛ր Հիսուս (Հայ. 22.17, 20):

I. ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԵՐԱՆԵԼԻ ՀՈՒՅՍՆ Է:

Տիտոսին 2.11-13 – ...խոհեմությամբ, արդարությամբ ու աստվածապաշտությամբ ապրենք այս աշխարհում՝ սպասելով այն երանելի հույսին և մեծ Աստծու ու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնությանը.

- ***Հափշտակության խոստումը Հովհ. 14***

  Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե Ես գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որպեսզի որտեղ Ես եմ, դուք էլ այնտեղ լինեք (Հովհ. 14.2,3):

  Որովհետեւ Աստուած մեզ չ'դրաւ բարկության համար, այլ փրկությունը ստանալու համար մեր Տէր Հիսուս Քրիստոսի ձեռով (1 Թես. 5.9):

  Եւ սպասէք նորա Որդուն երկնքից, որին հարություն տուաւ մեռելների միջից՝ Հիսուսին որ փրկում է մեզ գալու բարկութիւնից (1 Թես. 1.10):

  Որովհետեւ իմ համբերության խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ'պահեմ այն փորձության ժամից, որ գալու է այս աշխարհի վրա, որ փորձի երկրի երեսի վրա բնակողներին (Հայ. 3.10):

- ***Քրիստոնեական դինոմինացիաների մեծ մասը չեն ընդունում հափշտակության աստվածաբանությունը ինչպես նկարագրված է 1 Թեսաղոնիկեցիներ 4-ում:***

II. Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ:

Ա Թեսաղ. 4.12-18 – 12 Չենք ուզում, եղբայրնե՛ր, որ անգետ լինեք ննջեցյալների վերաբերյալ, որ չտրտմեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: 13 Որովհետև, եթե հավատում ենք, թե Քրիստոսը մեռավ և հարություն առավ, այնպես էլ Աստված Հիսուսով ննջողներին կբերի Նրա հետ:

*14 Որովհետև, Տիրոջ խոսքով ձեզ սա ենք ասում, թե մեզնից նրանք, որ կենդանի են ու մնան մինչև Տիրոջ գալուստը, ննջեցյալներից առաջ չեն անցնելու: 15 Որովհետև Տերն Ինքը (1) հրամայական գոչյունով, (2) հրեշտակապետի ձայնով, (3) Աստծո փողով կիջնի երկնքից, և նախ Քրիստոսով մեռնողները հարություն պիտի առնեն. 16 հետո մենք, եթե ողջ մնանք, նրանց հետ պետք է **հափշտակվենք <u>ամպերով՝ օդի մեջ</u> Տիրոջը դիմավորելու**. և այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք: Ուրեմն մխիթարեցե՛ք միմիանց այս խոսքերով:*

Յոթ «հափշտակություններ» =harpazo x13 – բռնագրավել, տանել ուժով, կամ հեռացնել

Ենովքը. Ծննդ. 5.42, Եբր. 11.5

Եղիան. Դ Թագ. 2.1,11

*Հիսուսը. Մարկ. 16.19, **Գործք 1.9-11**, **Հայտ. 12.5***

Փիլիպպոսը. Գործք 8.39

Պողոսը. Բ Կոր. 12.2-4

Եկեղեցին. Ա Թես. 4.17

Հովհաննեսը. Հայտ. 4.1

- ***Պողոս առաքյալն ասում է, որ «անօրենության մարդը», որը կապված է նեռի հետ, համաշխարհային ասպարեզ է դուրս գալիս եկեղեցու հափշտակությունից հետո:***

  Բ Թես. 2:3-4 – 3 որովհետև Տիրոջ օրը չի գա, եթե նախ ապստամբությունը չգա, ու չհայտնվի անօրենության մարդը՝ կորստյան որդին, 4 այն հակառակորդը, որ գոռոզացած է բոլորի նկատմամբ, որն աստված կամ պաշտամունքի առարկա է անվանվում. մինչև իսկ նա Աստծու տաճարում կնստի և ինքն իրեն ցույց կտա, թե Աստված է:

  *2 Թես. 2.6-8 - 6 Եւ այժմ դուք ինքներդ գիտէք, թէ ինչն է <u>Նրան</u> հետ պահում, որ այդ Հակառակորդը ինքն իրեն հայտնի անի մինչեւ ժամանակը գա. 7 որովհետեւ անօրէնության այդ խորհրդավոր ուժը արդէն գործի վրա է. **բայց այդ պիտի չհայտնուի մինչեւ այն ժամանակ, երբ մէջտեղից կը վերացուի ՆԱ, որ այժմ նրան հետ է պահում**: 8 Եւ ապա պիտի հայտնուի Անօրէնը, որին Տէր Հիսուս պիտի կործանի իր բերանի հոգով եւ պիտի ոչնչացնի իր հայտնությամբ իր գալստյան ժամանակ:*

- ***Սուրբ Հոգին գործում է եկեղեցու միջոցով:***

  *18 այդ վեմի վրա եմ կառուցելու **ԻՄ եկեղեցին...** (Մատ. 16.18)*

III. ԻՆՉՈՒ ԵՄ ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆԸ:

1. ***Մենք նոր մարմին կստանանք:***

   Ահա, մի խորհուրդ հայտնեմ ձեզ. բոլորս պիտի չննջենք, բայց բոլորս պիտի՛ ***փոխվենք****,* ***<u>հանկարծակի</u>****, մեկ* ***ակնթարթում՝ վերջին փողի*** *ժամանակ, որովհետև փողը կհնչի, մեռելները հարություն կառնեն առանց ապականության, և մենք* ***կփոխվենք****: Որովհետև պետք է, որ այս ապականացուն անապականություն հագնի, և մահկանացուն անմահություն հագնի (Ա Կոր. 15.50-53):*

2. ***Մենք պետք է հանդիպենք և տեսնենք Հիսուսին դեմ առ դեմ:***

   ...բայց գիտենք, որ երբ Նա <u>հայտնվի</u>, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է (Ա Հովհ. 3.2):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ